«Ուսանողների սովորելու մոտիվացիայի անկման և բարձրացման պատճառները. ուսանողների և դասախոսների հարցում»

Հետազոտությունը նախաձեռնվել է ՈԱԱԿ «Ուսանողության Ձայն» նախագծի աշխատանքային թիմի կողմից

Դաշտային աշխատանքները իրականացրել են ինչպես «Ուսանողության Ձայն» աշխատանքային թիմը, այնպես էլ նախագծում պրակտիկա անցնող ուսանողները

Երևան 2014

Բովանդակություն

Ներածություն…… 3

Հետազոտական ծրագիր…… 4

Վերլուծություն……... 7

Դասախոսների ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներ…… 7

Ուսանողների ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներ……..… 15

Եզրակացություն……... 23

Առաջարկներ……..25

Ներածություն

Բարեփոխումների ընթացքը բարձրագույն կրթության համակարգում բազմաբևեռ գործընթաց է, որն առնչվում է այսպես կոչված շահակիցներին՝ բարձրագույն կրթության խնդիրներում շահագրգռված բազմաթիվ խմբերին. դրանցից թերևս առավել մեծ դերակատարություն ունեն կրթական գործընթացներում անմիջականորեն ներգրավված կողմերը՝ ուսանողները և դասախոսական կազմը:

Դժվար է պատկերացնել, որ առանց դասախոսական կազմի անմիջական մասնակցության և շահագրգռվածության բարեփոխումների ընթացքը կարող է հաջողությամբ պսակվել: Սակայն բարեփոխումների ընթացքի թերևս ամենակարևոր շահեկիցն առաջին հերթին ուսանողությունն է՝ կրթական գործընթացի այն մասնակիցը, որը և հանդիսանում է իր կրթության հիմնական պատվիրատուն:

Բարձրագույն կրթության հայեցակարգը ժամանակակից աշխարհում բխում է այն սկզբունքից, որ կրթությունն այժմ ոչ միայն հասարակական, ազգային արժեք է, այլ նաև անհատի կրթական պահանջմունքների բավարարման ասպարեզ: Հետազոտողները ավելի հակված են եզրակացնելու, որ ուսանողների կրթության որակը և արդյունքը կախված են նրանից, թե ինչ տիպի գործունեություն և ներգրավվածություն ունեն ուսանողները բուհում, նրա հետաքրքրվածությունը կրթվելու վերաբերյալ, ինչպես է վերաբերվում սովորելուն և ինչքան ժամանակ են տրամադրում տարբեր բուհական գործունեություններին և սովորելու գործընթացին:

Բոլոր գործընթացները և փոփոխությունները, որոնք անց են կացվում բուհի կրթական մակարդակում, կարող են համարվել էֆեկտիվ, եթե նրանք բարձրացնում են ուսանողների մոտիվացիան, ներգրավվածությունը, և էֆեկտիվ չեն հակառակ դեպքում:

Հետազոտության նպատակն է պարզել երևանյան բուհերի ուսանողների նեգրավվածության առանձնահատկությունները, մոտիվացիայի անկման և բարձրացման պատճառները:

Ուսանողների սովորելու մոտիվացիայի անկման և բարձրացման պատճառները. ուսանողների և դասախոսների հարցում

Հետազոտական ծրագիր

Պրոբլեմային իրավիճակ: Վերջին ժամանակներում դասախոսների կողմից հաճախակի հնչում է կարծիք, որ ուսանողները, ընդունվելով բուհ, ցանկություն չունեն սովորելու: Սակայն զարմանալի է այն փաստը, որ ուսանողները բոլորն էլ ուզում են համալսարան ընդունվել, բայց ընդունվելուն և վարձերը վճարելուն զուգահեռ նրանք չեն սովորում: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է պարզել՝ ինչու է ուսանողների սովորելու մոտիվացիան նվազում, որ գործոններն են ազդում մոտիվացիայի անկման վրա, արդյոք ուսանողները ներգրավված են ուսումնական գործընթացի մեջ և ինչպես է տեղի ունենում դասընթացի կազմակերպումը, որպեսզի նոր մեթոդներ մշակվեն ուսանողներին մոտիվացնելու և որակյալ կրթություն մատուցելու համար: Եթե ուսանողները մոտիվացված սովորեն, ապա հետագայում կլինեն որակյալ մասնագետներ: Կան որոշակի գործոններ, որոնք ազդում են ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա:

Հետազոտության օբյեկտ: Ուսանողների սովորելու վրա ազդող գործոններ:

Հետազոտության առարկա: Ուսանողների և դասախոսների կարծիքը սովորելու վրա ազդող գործոնների վերաբերյալ:

Հետազոտական նպատակ: Պարզել ուսանողների սովորելու մոտիվացիայի անկման կամ բարձրացման վրա ազդող գործոնները:

Հետազոտական խնդիրներ

Խնդիր 1. Պարզել ուսանողների սովորելու վրա ազդող գործոնները դասախոսների տեսանկյունից:

1. Պարզել ուսանողների հաճախելիությունը դասերին:
2. Պարզել՝ արդյոք ուսանողները ակտիվորեն մասնակցում են դասընթացին, թե պասիվ օբյեկտներ են/ որքանով են ազատ հարցեր տալիս, կարծիք արտահայտում/:
3. Պարզել դասընթացի կազմակերպման ժամանակ կիրառվող մեթոդները:

3.1 Արդյոք կիրառվում են դերային խաղեր, դեպքի ուսումնասիրությունները, խմբային քննարկումներ, ուղեղների գրոհներ, ինքնուրույն աշխատանքներ, դասախոսություններ և այլ մեթոդներ: Պարզել մեթոդի թույլ և ուժեղ կողմերը:

4. Պարզել գնահատման օբյեկտը կրթական գործընթացում. ինչն է գնահատվում դասախոսների կողմից (գիտելիքի վերարտադրությունը, ուսանողի ստեղծագործական, վերլուծական աշխատանքը):
5. Պարզել՝ ինչ դեր ունեն ուսանողներն իրենց գիտելիքի ձեռքբերման գործում:
6. Պարզել, թե դասընթացի կազմակերպումը ինչ ձևով է տեղի ունենում, ինչպիսի խմբերի հետ են դասախոսները աշխատում, ինչպիսի հանձնարարականներ են տալիս ուսանողներին: Արդյոք ուսանողների քանակը ազդում է ուսանողների սովորել մոտիվացիայի վրա:
7. Պարզել դասխոսի վերաբերմունքը ուսանողի նկատմամբ: Ինչպիսի կարծիք է ձևավորում դասախոսը ուսանողների մասին: Ինչպիսի պարտականություններ է ստանձնում ուսանողներին, և արդյոք նրանք պատասխանատվություն են վերցնում իրենց վրա:
8. Պարզել՝ ինչպիսի հետազոտական աշխատանքներ են հանձնարարվում: Որոնք են համարվում հետազոտական աշխատանքներ: Արդյոք դա կա ուսումնական պլանի մեջ, արդյոք վերլուծական աշխատանքներ հանձնարարվում են: Ինչպես են կազմակերպում կուրսային, դիպլոմային աշխատանքները:
9. Պարզել՝ որքանով է մատուցված նյութը պետքական և կիրառելի:

10. Ինչպիսի մեթոդներ են կիրառում դասախոսները ուսանողների ներգրավելու համար ուսումնական գործընթացի մեջ: Ինչ քայլեր են ձեռնարկում դասախոսները, որ իրենց ուսանողները մասնագետ դառնան, ինչ մեթոդներ են կիրառում:

11. Պարզել՝ առկա են արդյոք սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերություններ դասախոսների և ուսանողների միջև:

Խնդիր 2. ***Պարզել ուսանողների սովորելու վրա ազդող գործոնները ուսանողների տեսանկյունից:***

1. Պարզել՝ ուսանողները ինչու են ընդունվել համալսարան:
2. Պարզել՝ ինչ մասնագիտություն են նախընտրել, ով է օգնել մասնագիտություն ընտրելու հարցում, և արդյոք սովորում են այն մասնագիտությամբ, որը ցանկանում էին ընդունվել:
3. Պարզել՝ ինչպիսի հաճախականությամբ են մասնակցում դասերին: Արդյոք ակտիվ են, պասիվ են:
4. Պարզել՝ արդյոք ուսանողները ակտիվորեն մասնակցում են դասընթացին, թե պասիվ օբյեկտներ են/ որքանով են ազատ հարցեր տալ, կարծիք արտահայտել/
5. Պարզել՝ դասընթացի կազմակերպման ժամանակ կիրառվող մեթոդները:
6. Պարզել գնահատման օբյեկտը կրթական գործընթացում՝պարզել, թե ինչն է գնահատվում դասախոսների կողմից (գիտելիքի վերարտադրությունը, ուսանողնի ստեղծագործական, վերլուծական աշխատանքը):
7. Պարզել՝ ինչ դեր ունեն ուսանողներն իրենց գիտելիքի ձեռքբերման գործում:
8. Պարզել՝ դասընթացի կազմակերպումը ինչ ձևով է տեղի ունենում: Ինչպիսի ոհանձնարարականներ են տալիս ուսանողներին: Ինչպիսի կուրսերում են սովորում ուսանողները՝ մեծ թե փոքր:
9. Պարզել՝ արդյոք ուսանողներին հանձնարարվում են հետազոտական աշխատանքներ, ինչպիսին են այդ հետազոտական աշխատանքները: Ինչ ձևով են կազմակերպվում կուրսային, դիպլոմային աշխատանքները:
10. Պարզել, թե որքանով են ուսանողին մատուցված նյութը պետքական և կիրառելի:
11. Պարզել՝ առկա են արդյոք սուբյեկտ-սուբյեկտ փոխհարաբերություններ դասախոսների և ուսանողների միջև:

Վերլուծություն

Դասախոսների ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներ

Ստորև ներկայացված են դասախոսների ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցների կարծիքներից մի քանի ընդհանրացումներ:

Նախ, դասախոսները անդրադարձան այնպիսի հարցին, ինչպիսին է դիմորդների ընդունելությունը:

Դիմորդները, կարդալով մասնագիտության անվանումը, բովանդակության վերաբերյալ պատկերացում չունեն: Հաճախ դիմորդները ընդունվում են բուհ ծնողների, բարեկամների և ծանոթների խորհրդով կամ մասնագիտության հեղինակության պատճառով: Նրանք պատկերացում չունեն բուհ ընդունվելու և պրոֆեսիոնալ կողմնորոշման մասին: Դիմորդները պետք է լրջորեն տեղեկացվեն իրենց ապագա մասնագիտությունների մասին, որից հետո որոշում կայացնեն և հասկանան, արդյոք պետք է իրենց տվյալ մասնագիտությունը, թե ոչ:Պատկերացումներն և ոչ ճիշտ ինֆորմացիա ունենալը ազդում են ուսանողների ակնկալիքների վրա: Հաճախ ուսանողների պատկերացումները մասնագիտության վերաբերյալ ձևավորում է շրջապատը, հարազատները, ընտանիքը, ինչպես նաև տեղեկատվական այլ աղբյուրներ, որոնք չեն կարող լիարժեք ճիշտ ներկայացնել յուրաքանչյուր մասնագիտության առանձնահատկությունները և տալ լիարժեք մասնագիտական կողմնորոշվածություն:

Դասախոսները հիմնականում համակարծիք էին այն տեսակետի շուրջ, որ աշակերտը, մինչև բուհ ընդունվելը պետք է ստանա միջին մասնագիտական կրթություն, որից հետո արդեն ընտրի շարունակի կրթությունը բուհում, թե ոչ, որ բուհ ընդունվեն այն երիտասարդները, ովքեր որոշ չափով կողմնորոշվել են մասնագիտության ընտրության մեջ, որոնք հստակ հասկանում են՝ ինչ է իրենցից պահանջվելու և ինչի համար են այցելում բարձրագույն ուսումնական հաստատություն: Նաև առաջարկ հնչեց. եթե դպրոցներում բարձր դասարանների աշակերտները ստանան մասնագիտական

որոշակի գիտելիքներ, արդեն բուհ ընդունվելիս շատ ավելի բարձր մոտիվացիա կունենային:

<<Ընդունելության քննություններին պատրաստվելու համար յուրաքանչյուր դիմորդ պարապում է դասախոսի մոտ առնվազն մեկ տարի և ստանում շատ սահմանափակ, շտեմարանային գիտելիքներ,այսինքն մեր առաջին կուրսերը համարվում են այն երեխաները, որոնք բուհ ընդունվելուց առաջ պարապել են միայն այն առարկաները, որոնք նրանց պետք են ընդունելության համար: Շատ դիմորդների համար ընդունելության քննությունը վերածվում է մղձավանջի, այսինքն տնտեսագետը հայոց լեզուն քննություն է հանձնում բանասերին հավասար, դա սթրես է երեխաների համար:>>

Հյուսիսային համալսարան, դասախոս

Դասախոսներից շատերը գտնում են, որ այդ սթրեսի պատճառով էլ կարող է ընկնել մոտիվացիան, և նրանք առաջարկեցին, որպեսզի դիմորդները ընդունվեն , սովորեն մեկ կիսամյակ հետո քննությամբ ամփոփեն և հասկանան ինչ են ուզում, ինչ կարող են անել:

Դիմորդների կողմից միջին մասնագիտական կրթությունների պահանջարկի պակաս կա: Շատերը ձգտում են ստանալ հեղինակավոր կրթություն՝ տեղյակ չլինելով աշխատաշուկայի պահանջարկից: Բոլոր դիմորդները, հավաքելով անցողիկ միավորներ, ընդունվում են բուհ, ինչի հետևանքով ոչ բոլորն են սովորում:

Ուսանողին պետք է նախօրոք տեղեկություն տրամադրել իր ընտրած մասնագիտության մասին, որպեսզի հետագայում չլինի հիասթափություն և սովորելու նկատմամբ մոտիվացիայի անկում: Շատ համալսարանների կայքերում արդեն ներդրված են տեղեկություններ տվյալ բուհում առկա մասնագիտությունների մասին, որը դրականորեն է ազդել դիմորդի մասնագիտության կողմնորոշման վրա: Սակայն բուհ ընդունվելուց հետո առաջին կուրսի ուսանողները բախվում են մեկ այլ խնդրի հետ.

նրանք չեն կարողանում տարբերել դպրոցը բուհից, շատ ժամանակ իրենց պահում են՝ ինչպես դպրոցում, այսինքն նրանք դասախոսից պահանջում են հստակ լեկցիաների

թելադրում, չեն օգտվում լրացուցիչ գրքերից, պատասխանատու չեն վերաբերվում դասերին: Առաջին կուրսում բոլոր ուսանողները սովորում են շատ առարկաներ, որոնք մասնագիտության հետ կապ չունեն, այնպիսի առարկաներ, որոնք նրանք դպրոցում են անցել, և ստացվում է, որ դա նույն դպրոցական ծրագրի կրկնությունն է: Մինչդեռ այդ առարկաները նրանք պետք է անցնեն մասնագիտական կողմնորոշմամբ (օրինակ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն):

<<Պարտադիր առարկաների մեջ մտնում են էկոլոգիան, հայոց լեզուն ու գրականությունը, հայոց պատմությունը, քաղ.պաշտպանությունը, ֆիզկուլտուրան: Սրանք բոլորը նախարարությունից եկած պարտադիր առարկաներն են, որոնցից էլ որոշ չափով տուժել են մասնագիտական առարկաները, այսինքն ժամաքանակները կրճատվել են:>>

Գեղարվեստի պետական ակադեմիա, դասախոս

Առաջին կուրսից հետո, երբ շատանում են մասնագիտական առարկաները, և ուսանողը հասկանում է դրանց պիտանելիությունը և կիրառումը, մոտիվացիան սովորելու նկատմամբ բարձրանում է, սակայն բարձր կուրսերում՝ 4-րդ կուրսում, այն նորից անկում է ապրում, երբ ուսանողը հասկանում է, որ տվյալ մասնագիտությամբ շատ դժվար կլինի աշխատանք գտնել: Այսինքն, ապագայի նկատմամբ վստահ չլինելու հետ կապված նրանց սովորելու դրդապատճառները նվազում են:Մեծ խնդիր է հանդիսանում բուհ-աշխատաշուկա կապը, որը բացակայում է:

<<Թե ինչքան մասնագետ է անհրաժեշտ, այսօր որոշում է շուկան, ստացվում է, որ շուկային պետք չեն այդքան շատ մասնագետներ, և ստացվում է, որ ուսանողը ավարտում է ինչ-որ բաժին ու դառնում տաքսիի վարորդ, որովհետև պետությանը պետք չէ այդ մասնագետը: Օրինակ՝կան շատ բուհեր, որոնք ունեն տնտեսագիտի մասնագիտություն, կամ իրավաբանի, այդքան շատ մասնագետ պատրաստելու դեպքում էլ մենք ունենում ենք խնդիր աշխատանքի տեղավորման գործընթացում:>>

Սլավոնական համալսարան, դասախոս

Այսինքն պետության կողմից նախօրոք պետք է յուրաքանչյուր մասնագիտության համար սահմանված լինի ուսանողների ընդունելության քանակը, որպեսզի հետագայում բուհ ավարտող ուսանողը չբախվի այնպիսի խնդրին, ինչպիսին է գործազրկությունը:

Այս ամենից բացի ուսանողի մոտիվացիան սովորելու նկատմամբ կարող է բարձրանալ կամ իջնել կապված դասախոսից, նրա դասավանդելու տեխնիկայից, մեթոդներից տրված հանձնարարություններից և առաջադրանքներից: Ուսանողների մոտիվացիան սովորելու նկատմամբ բարձրանում է, երբ դասախոսը նրան ներգրավում է դասապրոցեսի գործընթացի մեջ տարբեր դասավանդման մեթոդներով, այդ ժամանակ, ինչպես նշում են դասախոսները.*<<Անգամ այն ուսանողները, որոնց կարծես ոչինչ չի հետաքրքրում, սկսում են մեծ հետաքրքրություն ցուցաբերել տվյալ առարկայի նկատմամբ>>:*

Հայբուսակ համալսարան, դասախոս

Դասախոսները նշում են, որ կիրառվում են տարբեր մեթոդներ, որպեսզի ուսանողը ներգրավված լինի դասապրոցեսում: Օգտագործում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ խմբային քննարկումներ, դերային խաղեր, ուղեղների գրոհ, բանավեճերի անցկացում և այլն: Գտնում են, որ այդ բոլոր մեթոդները, իհարկե, դրականորեն են անդրադառնում ուսանողների սովորելու գործընթացի վրա, սակայն, օրինակ՝ դերային խաղերի ժամանակ նրանք չեն կարողանում շատ քանակությամբ ուսանողների ներգրավվել դասապրոցեսի մեջ:

Նաև նշում են, որ օրինակ բանավեճերի անցկացումը ոչ բոլոր կուրսերում կարող են կիրառել, քանի որ պետք է հաշվի առնել յուրաքանչյուր կուրսի ուսանողների միմյանց նկատմամբ տրամադրվածությունը, որպեսզի այդ ամենը չվերածվի կռվի:

Երբ ուսանողը կարողանում է անկաշկանդ հարցեր հղել դասախոսին, նույնիսկ դասապրոցեսից հետո, դա ևս դրական ազդեցություն է ունենում նրա մոտիվացիայի

վրա: Շատերը նշում են, որ ուսանողները նույնիսկ online տարբերակով էլ կարողանում են մշտապես իրենց հետ կապի մեջ լինել:

Դասախոսները նշում են, որ եթե իրենք դասագիրքը վերցնեն և մտնեն լսարան, թելադրեն և դուրս գան, այդպես ուսանողը հաստատ չի սովորի: Դասերին պետք է համատեղել տեսականը պրակտիկայի հետ, թեկուզ և օրինակներով, ինչը ուսանողին ավելի մեծ հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալ առարկան:

Երբ դասախոսները առանձին ուսանողի հետ դուրս են գալիս ընթերցասրահ, գրադարանում են հանդիպում, աշխատում են, դա դրականորեն է ազդում ուսանողի սովորելու ցանկության վրա: Շատ կարևոր են ուսանողական միջոցառումները, երբ դասախոս-ուսանող փոխհամագործակցությունը այդտեղ երևում է:

Թեկուզ գիտական ընկերության կազմակերպած կոնֆերանսները. Երբ տեսնում են, որ աշխատանք կա, ու դասախոսը պատասխանատու է, թե ուսանողը այդտեղ ինչ կներկայացնի, արդեն այստեղ փոխհամաձայնեցված աշխատանքը երևում է, և պարզ է դառնում, որ այդ ուսանողը արդեն անմիջական կապ ունի դասախոսի հետ: Եվ այդ աշխատանքի նկատմամբ արդեն նրանք երկուսն էլ պատասխանատու են դառնում: Սա նպաստում է, որ երկու կողմն էլ պատասխանատվություն կրեն տվյալ գործի նկատմամբ: Սովորելու դրդապատճառի անկում կարող են հանդիսանալ նաև գրադարանների աղքատ վիճակը, ինչը նշանակում է, որ հասանելի գրականությունը քիչ է, եղածն էլ օտար լեզուներով է: Եվ դրա հետևանքով, նրանք նշում են՝ չի կարելի ամբողջությամբ հրաժարվել լեկցիոն սկզբունքից, որովհետև այն ուսանողին ուղղորդող բնույթ է կրում: Սակայն, պետք չէ միայն թելադրությամբ զբաղվել, այլ պետք է նրանց հետ քննարկումներ անել, իրենց կարծիքը լսել և այլն:

Ինչպես նաև սովորելու դրդապատճառի փոփոխություն է նկատվում, երբ ուսանողները գնում են պրակտիկայի: Յուրաքանչյուր ուսանողի մոտ այն տարբեր ձևով է արտահայտվում. ոմանց մոտ՝ դրական, ոմանց մոտ՝ բացասական: Այստեղ հարկ է առանձնացնել Հայաստանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի

դասախոսների կարծիքները, որոնք նշում էին, որ պրակտիկայից հետո ուսանողների մոտ սովորելու նկատմամբ մոտիվացիայի անկում է նկատվում, որովհետև շատերը հասկանում են, որ իրենք չեն կարող ուսուցիչ լինել: Շատերը չեն ուզում գնալ դպրոց. արդեն հստակ պրակտիկաների ընթացքում հասկացել են, որ իրենք դպրոցի համար չեն: Իրենք իրենց մեջ բացահայտում են՝ ով կարող է աշխատել որպես ուսուցիչ, և ով չի կարող: Նշում են.*<<Կան ուսանողներ, որոնք ասում են, որ գուցե առարկային լավ են տիրապետում, բայց իրենց ուսուցչի կարգավիճակում չեն պատկերացնում, դրանից հետո նման ուսանողների մոտ գալիս է պարզապես դիպլոմ ստանալու համար բուհ այցելելը, այսինքն, սովորելու նկատմամբ մոտիվացիայի անկում է նկատվում: Դիպլոմ ստանալուց հետո ուսանողը հեռանում է բուհից և մտածում՝ որտեղ պետք է շարունակի ուսումը, որպեսզի կարողանա իրեն համապատասխան աշխատանք գտնել:>>*

Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, դասախոս

<<Երբ ընդունվում են առաջին կուրս, այդ հարցը չի լինում իրենց մոտ, քանի որ գերխնդիրը մի տեղ ընդունվելն է, կոպիտ ասած, շատ-շատերի համար, որ այնքան որ բարձրագույն կրթություն ունենան, մի տեղ ընդունվեն, դիպլոմ ունենան: Հետո արդեն սկսվում է այդ վերագնահատման գործընթացը՝արդյո՞ք ճիշտ են ընտրել տվյալ բուհը:>>

Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, դասախոս

Նույնիսկ ՀՊՄՀ-ի դասախոսները նշում են, որ կան դեպքեր, երբ իրենց բուհ ընդունվում են անպիսի դիմորդներ, որոնք առաջին մի քանի հայտերով դիմել են և չեն ընդունվել այլ տեղեր, արդեն ստիպված իրենց մոտ են եկել: Այս խնդիրը նույնպես կապված է աշխատաշուկայի հետ, երբ ուսանողը մտածում է, որ ուսուցիչ աշխատելով նա չի կարողանա իրեն և իր ընտանիքը պահել:

Իրենց միայն դիպլոմ ստանալն է հետաքրքրում: Դասախոսները նշում են, որ կան նաև ոչ մոտիվացված այնպիսի ուսանողներ, որոնք ծանոթի միջոցով ընդունվելու են աշխատանքի, և իրենցից միայն դիպլոմն է պահանջվում:

Պրակտիկան յուրաքանչյուր ուսանողի համար իրենից ներկայացնում է ինքնաբացահայտման մի փուլ: Դասախոսները նշում են, որ կան ուսանողներ, որոնք աչքի չեն ընկել իրենց առաջադիմությամբ համալսարանում դասերի ժամանակ, սակայն պրակտիկայի ժամանակ իրենք կարողացել են գերազանց արդյունք ցուցաբերել: Շատ ժամանակ լավ կազմակերպված պրակտիկան դրական ազդեցություն է ունենում ուսանողների վրա: Նրանք սկսում են ավելի խորանալ իրենց մասնագիտության մեջ:

Նաև դրական խթան են հանդիսանում ուսանողների համար ինքնուրույն, հետազոտական, վերլուծական, ստեղծագործական աշխատանքները, որոնք ըստ դասախոսների նրանք կատարում են մեծ ոգևորությամբ:

Գնահատականը և գնահատվելը դասախոսի կողմից նույնպես մեծ դեր են խաղում ուսանողի սովորելոու մոտիվացիայի վրա:

Ինչպես նաև ռոտացիան, որտեղ մրցակցություն է լինում ուսանողների միջև, ինչը և դրդում է ավելի լավ սովորելու և ավելի բարձր գնահատական ստանալու, որպեսզի անցնեն անվճար համակարգի:

Ինչպես արդեն նշվեց, որոշակի դրական շարժ է նկատվում ուսանողների մոտ բարձր կուրսերում, երբ նրանք սկսում են ավելի շատ սովորել մասնագիտական առարկաներ: Դասախոսները նշում են, որ արդեն մագիստրատուրայում շատ քիչ ուսանողներ են լինում, որոնց կրթվելու նկատմամբ մոտիվացիան ցածր է լինում: Հիմնականում արդեն մագիստրատուրայի ուսանողները տարիքով ավելի հասուն են, և գուցե դա մեծ նշանակություն ունի, որ նրանց սովորելու նկատմամբ մոտիվացիան ավելի բարձր է լինում, նրանք արդեն գիտակցում են՝ ինչի համար են ընդունվել, և որպեսզի հետագայում կարողանան լավ աշխատանք գտնել, նրանց անհրաժեշտ է շատ գիտելիքի պաշար:

Դասախոսների հետ ֆոկուս խմբային քննարկումներից պարզ դարձավ, որ խմբերի քանակը նույնպես ազդում է ուսանողների սովորելու վրա: Փոքր խմբերում ուսանողները ավելի լավ են սովորում, քան մեծ խմբերում, քանի որ փոքր խմբերում դասախոսները

կարողանում են անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր ուսանողին, հասկանալ յուրաքանչյուր ուսանողի ուժեղ և թույլ կողմերը և կարողանալ ճիշտ ձևով մոտեցում ցուցաբերել, որպեսզի նա ավելի դրդված լինի սովորել:

Ինչպես նաև դասախոսները անդրադարձան կրեդիտային համակարգի խնդիրներին. նրանք նշեցին. *<<Այս տարի շատ դժգոհություններ կային գնահատման համակարգի հետ կապված:*

Մենք շահագրգռված ենք երեխաների որակյալ կրթությամբ, սակայն բացերը շատ են>>:

Գեղարվեստի ակադեմիայի դասախոս

Բուհերում գործում է կրեդիտային համակարգը, սակայն հաշվի չի առնված յուրաքանչյուր բուհի առանձնահատկությունը:

Այս պարագայում խոսքը վերաբերում է այնպիսի բուհերին, որոնց մասնագիտացումը արվեստն է հանդիսանում: Դասախոսները նշում են, որ կրեդիտային համակարգի ներդրմամբ նրանք որոշակի խնդիրներ են ունենում գնահատման համակարգի հետ կապված:

Ուսանողների ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներ

Ներկայացնենք ուսանողների ֆոկուս-խմբային քննարկումների մասնակիցների կարծիքների մի քանի ընդհանրացումներ:

Ուսանողները իրենց մասնագիտության ընտրության հարցում առաջնորդվում են հիմնականում, թե որ առարկաներից ունեն լավ առաջադիմություն դպրոցում և ընտրում են այնպիսի մասնագիտություններ, որոնց ընդունելության քննությունները համապատասխանում են այդ առարկաներին: Ինչպես նաև նշում են, որ իրենց մասնագիտության մասին տեղեկատվություն ստացել են բարձր կուրսեցիներից, շրջապատից և ծնողներից: Հաշվի առնելով այս փաստը՝ կարող ենք հետևություն անել, որ վերը թվարկվածները չեն կարող այնպիսի տեղեկատվություն տալ դիմորդին, որ նա կարողանա լիարժեք պատկերացում ունենալ տվյալ մասնագիտության վերաբերյալ և դրա հետևանքով հարցվողները նշում են, որ ընդունվելով բուհ՝ նրանց ակնկալիքները մասամբ կամ լիովին չիրականացան:

Ուսանողները ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում նաև նշեցին.

<<Ամբողջ առաջին կուրսի ընթացքում ես և իմ շատ ծանոթներ փորձում էինք ազատվել դպրոցի թողած ազդեցությունից, իսկ ավելի բարձր կուրսերում արդեն շատ դժվար է չգնալ չնստել դասերի:>>

Երևանի պետական համալսարան, 3-րդ կուրսի ուսանող

Դպրոցի թողած ազդեցություն արտահայտությունը անելով՝ ռեսպոնդենտը ի նկատի ուներ այն, որ դպրոցում աշակերտներին վերաբերվում են՝ ինչպես երեխաների և շատ ժամանակ աշակերտը պարտադրված է սովորում տվյալ օրվա դասը, իսկ բարձր դասարաններում նրանցից շատերը լուրջ չեն նայում կրթվելուն և նրանցից յուրաքանչյուրը մասնավոր պարապում է միայն այն առարկաները, որոնք հետագայում նրան պետք են գալու:

Ինչպես նաև նշեցին, որ բարձր կուրսերում նրանք ավելի գիտակից են մոտենում կրթվելուն, որ յուրաքանչյուրը իրենցից անկախ սկսում են սովորել: Եվ բուհից ակնկալում են, որ այն պետք է տա ֆունդամենտալ գիտելիքներ իրենց մասնագիտության հետ կապված:

Ինչպես նաև ուսանողները նշում են, որ նրանց կրթվելու նկատմամբ դրական մոտիվացիան կարող է պայմանավորված լինել կրթական պլանում շատ մասնագիտական առարկաների առկայությամբ:

Ուսանողները նաև նշեցին, որ իրենց կրթվելու գործընթացում մեծ դեր են խաղում նաև դասախոսները, թե իրենց կողմից կիրառվող մեթոդներով, թե առարկան մատուցելու ձևով, թե անձնական վերաբերմունքով: Նշում էին անգամ.

<<Կան առարկաներ, որոնք ընդհանրապես առընչություն չունեին մեր մասնագիտության հետ, սակայն մենք դրանք շատ մեծ հաճույքով և եռանդով էինք սովորում, քանի որ մեզ դուր էր գալիս դասախոսի առարկան մատուցելու ձևը:>>

Հայկական պետական մանկավարժական համալսարան, 2-րդ կուրսի ուսանող

Ուսանողներին դուր է գալիս, երբ դասախոսը կարողանում է իրենց ներգրավել դասապրոցեսի մեջ:

Նրանք անդրադարձան նաև մեթոդներին, որոնք դասախոսները կիրառում են, օրինակ, բանավեճերը շատ դրական են ազդում, որովհետև միապաղաղ դասախոսությունից նրանք ձանձրանում են: Բանավեճերի ընթացքում ուղեղը սկսում է տրամաբանել, աշխատել, թեկուզ սխալ ինչ-որ բան ասելով, նրանք այդ իրենց ասածի վրա էլ անգամ կարող են սովորել: Դերային խաղեր, ուղեղների գրոհ, խմբային քննարկումները նույնպես դրական ազդեցություն են ունենում ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա, և նրանք դա բացատրում են այնպես, որ դասախոսը այդ մեթոդների միջոցով կարողանում է յուրաքանչյուրին ներգրավել կրթական գործընթացի մեջ և ավելի հետաքրքիր դարձնել այն: Ինչպես նաև դասերի ժամանակ կատարվում են զանազան փորձեր ըստ մասնագիտացման, ինչը նույնպես դրական ազդեցություն ունի

ուսանողների վրա, սակայն նրանք դժգոհ էին, որ փորձերի ժամանակ ոչ բոլորն են կարողանում իրենց ձեռքով անցկացնել ամբողջ գործընթացը, աղքատ լաբորատորիաների պատճառով: Եթե ուսանողը ինքը կարողանա փորձերը կատարել, դա ավելի արդյունավետ կլինի, քան, երբ այն կատարվում է խմբի կամ դասախոսի կողմից, որին նա պարզապես հետևում է և ուղղակիորեն չի մասնակցում գործընթացին:

Ուսանողներին շատ են մոտիվացնում նոր մեթոդների կիրառումները, և նրանք նշում են, որ հիմա դրանք ավելի շատ են կիրառվում դասախոսների կողմից:

Ավելի հեշտ է դասը սովորել այն ժամանակ երբ դասախոսը կիրառում է որոշակի մեթոդներ, այլ ոչ թե զուտ լեկցիայով: Երբ դասախոսը ներգրավում է ամբողջ լսարանին, այդ ժամանակ ուսանողները նշում են, որ հենց դասի ժամանակ են սովորում այդ օրվա թեման: Ինչպես նաև, երբ քննությունները անց են կացվում որոշակի մեթոդների կիրառմամբ, նույնիսկ այդ ժամանակ նրանք կարող են ինչ-որ նոր բան սովորել:

<< Քննության ժամանակ դասախոսը մեզ հանձնարարել էր open book կոչվածը, ինչը նշանակում էր, որ մենք պետք է քննության հարցերը պատրաստեինք տանը, սկզբում մենք ապշած էինք, թե ինչպես կարող է դասախոսը թույլ տալ, որ տանը գրենք կամ արտագրենք, բայց երբ ստացանք հարցաշարը, մենք հասկացանք, թե ինչ կլիներ, եթե մենք տեղում գրեինք: Դրանք այնպիսի դեպքեր էին, որ դու պետք է վերլուծեիր, այնքան մանրամասն պետք է ամեն ինչ ուսումնասիրված լիներ, որպեսզի կարողանայիր այդ հարցին պատասխանել, ու այդ ամենը պետք էր գրել ընդհամենը 1-2 պարբերությամբ: Այդ քչի մեջ տեղավորվելը շատ դժվար էր, որովհետև ինֆորմացիան ահռելի էր: Կոնկրետ էդ մոտեցմամբ մենք ավելի շատ բան սովորեցինք, քան եթե զուտ լեկցիայով պատասխանները լինեին>>

Երևանի պետական լեզվաբանական համալսարան, մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանող

Ուսանողները նաև նշեցին, որ ինքնուրույն և հետազոտական աշխատանքները նույնպես նպաստում են նրանց հետաքրքրության շարժմանը, և դա դրդում է ավելի մոտիվացված սովորելուն, և նրանք այդ ամենը անում են հաճույքով: Ինչպես նաև ուսանողները ներկայացնում են իրենց աշխատանքները լսարանի առջև, և վերջում յուրաքանչյուրը իր կարծիքն է արտահայտում, որից կարող է բանավեճ ծագել, ինչից նույնպես շատ կարևոր

ինֆորմացիա նրանք կարող են ձեռք բերել: Եվ հետազոտական աշխատանքները լինում են ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբային: Հարցվողները նշեցին խմբային աշխատանքների դրական և բացասական կողմերը: Բացասական կողմ է հանդիսանում, որ ոչ միշտ են ամբողջ խմբով աշխատում նրանք և լինում են դեպքեր, որ մեկ կամ երկու հոգի են անում ամբողջ խմբի աշխատանքը: Դրական կողմ նրանք դիտարկում են այն, որ երբ աշխատում է ամբողջ խումբը նրանք միմյանցից նույնպես կարող են օգտակար ինֆորմացիա ստանալ կամ նոր ինչ-որ բան սովորել:

Եթե դասը հետաքրքիր չի իր առարկայական առանձնահատկություններով, դասախոսի վերաբերմունքը շատ կարևոր է ուսանողի համար, և այն կարող է դրդել, որպեսզի ուսանողը սկսի սովորել: Ինչպես նաև շատ մեծ դեր է խաղում սեմինարների անցկացումները, և թե ինչպես է դա կատարվում: Երբ սեմինարները առողջ մրցակցային և բանավեճային մթնոլորտում են տեղի ունենում, ապա ուսանողները ավելի մոտիվացված են պատրաստ դասերին ներկա գտնվել և մասնակցել:

Սեմինարները կարող են անցնել ակտիվ քննարկումներով, բանավեճերով, պատահում են նաև այնպիսի սեմինարներ, որ դասախոսը հանձնարարում է թեման, ուսանողները սովորում են և պատմում դասախոսի փոխարեն, այսինքն այդ օրը ուսանողներից մեկը լինում է դասախոսի կարգավիճակում, հետո քննարկում է ծավալվում, ինչը և նպաստում է թեմայի ավելի լավ ընկալմանը: Կան նաև դասախոսներ, որոնք սեմինարներին պահանջում են, որ բոլոր ուսանողները պատասխանեն, իսկ, եթե մեկը չի պատրաստվել տվյալ օրը, նա պետք է հաջորդ դասին ներկայացնի:

Իհարկե սեմինարների անցկացման մեթոդները, ինչպես նաև լեկցիաների, տարբեր են կախված կուրսից: Օրինակ՝ առաջին կուրսեցիների հետ ֆոկուս խմբային քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ նրանց համար ինտերակտիվ մեթոդների կիրառումը անհասկանալի է և ավելի է դժվարացնում դասի ընկալումը: Նրանց ավելի հեշտ է, երբ դասախոսը թելադրում է լեկցիան և նրանք տանը դա սովորում են: Դա գալիս է նրանից, որ առաջին կուրսեցիները դժվարությամբ են ադապտացվում բուհին, և նրանք դեռ պատրաստ չեն ավելի ինտերակտիվ դասերի անցկացմանը, քանի որ դպրոցներում ի

սկզբանե դրված է, որ աշակերտը այսօր ստանում է հանձնարարություն, տանը սովորում է և վաղը պատասխանում:

Ինչքան կուրսերը բարձրանում են, այնքան ուսանողները ավելի մեծ եռանդով են սկսում սովորել: Դա գալիս է մասնագիտական առարկաների շատանալու հետ կապված, մասնագիտությունը ավելի լավ հասկանալու և նրա մեջ խորանալու հետևանքով, և նրանք խորությամբ սկսում են հասկանալ իրենց բուհ հաճախելու նպատակները: Եվ մեր կողմից նկատվեց մի փաստ, որ ինչքան բարձրանում են կուրսերը, այնքան ուսանողները ավելի շատ ժամանակ են հատկացնում ինքնակրթվելուն: Ինչպես նաև ուսանողի ինքնաարտահայտումն է փոփոխվում: Առաջին կուրսում, երբ ինչ-որ բան գիտեն փորձում են ցույց տալ, որ դասախոսը նրանց նկատի, բարձր կուրսերում դա չկա: Նրանք ավելի հանգիստ և ինքնավստահ են դառնում, և կարիք չի լինում դասախոսի աչքին երևալ:

Մագիստրատուրայում պատկերը այնպիսինն է, որ բոլոր ուսանողները պատասխանատվության մեծ զգացում ունեն և ընդունվել են իրոք սովորելու համար: Եվ դասերին ուսանողները ավելի ակտիվ են, քան բակալավրիատում:

Արդեն մագիստրատուրայում բոլորն են պահանջատեր ու հենց մասնագիտությունից կախված ու հենց մարդու տեսակից կախված, նշում են մագիստրատուրայի ուսանողները:

Դրական մոտիվացի կարող է լինել դասախոսական կազմը, այսինքն դասախոսների դասին պատրաստված լինելը և պատրաստակամությունը ուսանողին աջակցելու մեջ: Ինչպես նաև,երբ ուսանողը հասկանում է, որն է իր դերը տվյալ մասնագիտությունում, այսինքն այն դեպքում, երբ նա պատկերացնում է իրեն տվյալ բնագավառում: Երբ հասկանում է մասնագիտությայն կարևորությունը իր և շրջակա միջավայրի համար:

Գնահատականը կամ դասախոսի կողմից գովասանքը կարող է դրական ստիմուլ հանդիսանա սովորելու մոտիվացիայի վրա:

<<Երբ մարդ տեսնում է, որ նրա արած գործը գնահատվում է արժանվույնս, նա ավելի է մոտիվացվում ավելի լավ անելու համար:>>

Երևանի պետական ճարտարագիտական համալսարան, 4-րդ կուրսի ուսանող

Ինչպես նաև փոքր խմբերով աշխատելը, նույնպես արդյունավետ է, որտեղ դասախոսը կարողանում է ուսանողին անհատական վերաբերմունք ցուցաբերել և իմանալ յուրաքանչյուրի ուժեղ և թույլ կողմերը:

Սակայն կան նաև բացասական ազդեցություն ունեցող դրդապատճառներ, որոնք ազդում են ուսանողի սովորելու գործընթացի վրա: Գնահատականը բացասական ազդեցություն ունի, երբ ուսանողները ստանում են իրենց նախատեսածից ցածր և իրենց կարծիքով ոչ արժանի գնահատական: Կամ գտնում են, որ իրենց նկատմամբ արդարացի չի վարվում դասախոսը: ինչպես նաև դասախոսի սուբյեկտիվ բացասական վերաբերմունքից կարող է ուսանողի մոտ կրթության նկատմամբ մոտիվացիան ընկնի:

Ուսանողի չսովորելը կապված կարող է լինել նաևայն բանից, որ ինքը արդեն աշխատում է, և ըստ իրեն դա իր համար լավ տեղ է հանդիսանում աշխատանքի և դրա հետևանքով նա չի ցանկանում սովորել, որովհետև իր կարծիքով նա հասել է որոշակի բարձունքի, իսկ համալսարանն էլ չի լքում, միայն այն պատճառով, որպեսզի հետագայում դիպլոմ ստանա, որը, ըստ իր կարծիքի, շատ կարևոր է հասարակության այլ անդամների համար, որպեսզի նա չտարբերվի մնացածից:

Ինչպես նաև նշում են, որ ապագայի նկատմամբ անվստահությունը նույնպես բացասական ազդեցություն ունի սովորելու գործընթացի վրա, քանի որ այսօր սովորում են իրենց մասնագիտությունը, բայց չգիտեն վաղը կկարողանան համապատասխան աշխատանք գտնել, թե ոչ:

Լսարանի մթնոլորտը նույնպես կարող է ազդել ուսանողի մոտիվացիայի վրա, թե դրականորեն, թե բացասականորեն: Այսինքն, երբ լսարանում համերաշխ մթնոլորտ է, երբ բոլորը ձգտում են լավ սովորել, դա մոտիվացնում է անգամ թույլ ուսանողին ավելի լավ սովորելուն: Ինչպես նաև ուսանողի մոտ առողջ մրցակցություն է ձևավորվում: Իսկ

երբ ուսանողները առարկայի նկատմամբ հետաքրքրությամբ չեն լցված և դասի ժամանակ զբաղվում են կողմնակի բաներով, և դրանով իսկ խանգարում են դասը, դա բացասական ազդեցություն է թողնում ամբողջ լսարանի վրա:

Ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ նաև անդրադարձանք այնպիսի թեմային, ինչպիսին է բացակայությունները: Պատասխանները քիչ էին տարբերվում միմյանցից, հիմնականում ուսանողները առանձնացրեցին մի քանի պատճառ: Օրինակ՝ *<<Եթե առարկան հետաքրքիր չի լինում, չեմ նստում դասերին: Երբ որ չեն տալիս այն, ինչ ինձ պետք է, և իմ համար այդպիսի դասախոսի դասին նստելը հավասարազոր է ժամավաճառության:Անհետաքրքիր է, երբ լսարանին չի ներգրավում խոսակցության մեջ:>>*

Երևանի հյուսիսային համալսարան, 3-րդ կուրսի ուսանող

Երբ ուշանում են դասերից նույնպես շատ ժամանակ չեն մտնում լսարան կամ դասախոսները չեն թողնում զանգից հետո մտնել: Իսկ բարձր կուրսերում հիմնականում բացակայությունները պայմանավորված են լինում աշխատանքի հետ կապված:

Որոշակիորեն ուսանողների վրա ազդում է կրեդիտային համակարգը, որպեսզի նրանք նստեն դասերին, քանի որ բացակայությունների համար վերջնական քննություններից բալեր են իջեցվում: Սակայն չի կարելի ասել, որ դա դրական է ազդում ուսանողների վրա, քանի որ նրանք նշում են, որ նստում են իրենց համար անհետաքրքիր առարկաներին, կամ այնպիսի առարկաներին, որոնց դասավանդող դասախոսները ձանձրալի են դասը վարում,այդ դեպքում ուսանողները չեն լսում լեկցիան, և զբաղվում են ինչ-որ կողմնակի բաներով:

Ուսանողները նշեցին, որ կան դասախոսներ, որոնք մեծ նշանակություն են տալիս նրանց դասին ներկա գտնվելուն և, եթե բացակայությունները շատ են լինում, բացի այն միավորներից, որոնք ըստ կրեդիտային համակարգի պետք է դուրս գան, նաև ցածրացնում են գնահատականը, ինչը բացասաբար է ազդում նրանց մոտիվացիայի վրա:

Մագիստրատուրայի ուսանողները անդրադարցան այնպիսի խնդրին, որ ուսանողը բակալավրիատում մի մասնագիտություն ստանալով կարող է ընդունվել մագիստրատուրա մեկ այլ մասնագիտություն ստանալու, այդտեղ առաջանում է գիտելիքների և տերմինալոգիայի կոնֆլիկտ, այսինքն այն ուսանողը, որը ուրիշ մասնագիտությունից ընդունվել է մեկ ուրիշ տեղ մագիստրատուրա, լիարժեքորեն չի տիրապետում այդ ամենին և նրա համար դասախոսը ստիպված է լինում բացատրել այնպիսի բաներ, ինչ մնացած ուսանողները 4 տարվա ընթացքում սովորել են: Եվ ստացվում է, որ որոշ ուսանողների համար մագիստրատուրայում կրկնողություն է լինում:

Եզրակացություն

Այսպիսով, հետազոտելով ուսանողների և դասախոսների կարծիքը <<Ուսանողների սովորելու և չսովորելու դրդապատճառները>> թեմայով՝ մենք վեր հանեցինք մի շարք գործոններ, որոնք ազդում են ուսանողների մոտիվացիայի վրա:

- Դիմորդները ընդունվում են բուհ առանց մանրամասն տեղեկացվածության նրանց ընտրած մասնագիտության մասին: Ինչի հետևանքով նրանց մոտ առաջանում է կենֆլիկտ իրենց պատկերացումների, ակնկալիքների և իրականության հետ բախվելիս:
- Շատ համալսարաններ, որոնք ունեն կայքեր և տրամադրում են տեղեկատվություն իրենց մասնագիտությունների վերաբերյալ, քիչ են նկատում ուսանողների սովորելու նկատմամբ մոտիվացիայի անկում:
- Պետք է նախօրոք հստակ սահմանված լինեն բուհ ընդունվողների քանակը, այլ ոչ թե յուրաքանչյուր ուսանող, որը հավաքում է դրական միավորներ, կարողանա ընդունվել բուհ:
- Դասընթացը փոքր խմբերում նպաստում է ուսանողների մոտիվացված սովորելու վրա, քանի որ յուրաքանչյուրին անհատական մոտեցում է ցուցաբերվում դասախոսի կողմից:
- Բացասական խնդիր է հանդիսանում բուհ-աշխատաշուկա կապը, որը բացակայում է:
- Ապագայի նկատմամբ վստահ չլինելու պատճառով ուսանողների մոտիվացիան սովորելու նկատմամբ անկում է ապրում:
- Առաջին կուրսի ուսանողներին պետք է այլ մոտեցում ցուցաբերել, քան բարձր կուրսերի, այսինքն այն մեթոդները, որոնք կիրառվում են բարձր կուրսերում, դրանք չեն աշխատում առաջին կուրսեցիների հետ:
- Ուսանողների սովորելու նկատմամբ մոտիվացիայի վրա դրականորեն են ազդում դասախոսների կողմից կիրառվող մեթոդները. օրինակ՝ դերային խաղերը, բանավեճը, ուղեղների գրոհը, որոնց ժամանակ ուսանողները կարող են նոր բան սովորել ոչ միայն դասախոսից, այլ նաև միմյանցից:
- Պրակտիկան հանդիսանում է դրդապատճառ, որպեսզի ուսանողները ավելի մոտիվացված մոտենան իրենց ընտրած մասնագիտությանը:
- Նկատվում է տարբերություն մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողների սովորելու նկատմամբ մոտիվացիայի մեջ: Մագիստրատուրայի ուսանողները ավելի մեծ պատասխանատվության զգացում ունեն կրթվելու վերաբերյալ:
- Շատ մասնագիտական առարկաների ժամաքանակների առկայությունը և բազմազանությունը դրականորեն է ազդում ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա, ինչպես նաև տալիս է հնարավորություն, որպեսզի նրանք

կարողանան հասկանալ հետագայում իրենց գործունեությունը տվյալ բնագավառում:

- Ռոտացիան հանդիսանում է խթան ուսանողների սովորելու գործընթացում:
- Ուսանողների սովորելուն խոչընդոտ են հանդիսանում աղքատ գրադատանները և օտարալեզու գրականությունը:

Առաջարկներ

Ամփոփելով տվյալ հետազոտությունը մեր կողմից մշակվել են առաջարկներ, որոնց հետևանքով կբարձրացվի ուսանողների սովորելու նկատմամբ մոտիվացիան:

- Ստեղծել այնպիսի մարմին, որը կզբաղվի դիմորդների մասնագիտական կողմնորոշմամբ, որտեղ մանրամասն կներկայացվի յուրաքանչյուր մասնագիտության առանձնահատկությունները և ամբողջական պատկերացում կտրվի բուհի վերաբերյալ:
- Միջին մասնագիտական հաստատություններ բացվեն, որոնք կլինեն պարտադիր յուրաքանչյուր դիմորդի համար, որը հետագայում ցանկանում է ընդունվել բուհ, որպեսզի յուրաքանչյուր դիմորդ ընտրի այն մասնագիտությունը, որը նա ցանկանում է, որից հետո ինքը որոշի արդյոք արժի շարունակել ընտրած մասնագիտությամբ:
- Ստեղծել բուհ-աշխատաշուկա կապը, որի հետևանքով ուսանողների սովորելու նկատմամբ մոտիվացիան կբարձրանա, քանի որ նրանք վստահ կլինեն ապագայի նկատմամբ: Այսինքն ուսանողները կհասկանան, եթե նրանք լավ սովորեն, ապա հետագայում աշխատանք կունենան:
- Դասխոսները պետք է կիրառեն տարբեր դասավանդման մեթոդներ, ինչի հետևանքով նրանք կներգրավեն ուսանողների դասապրոցեսի մեջ և դրանով իսկ կբարձրացնեն վերջիններիս կրթվելու նկատմամբ մոտիվացիան:
- Առկա գրականության մեծամասնությունը օտարալեզու են, ինչի հետևանքով բազմաթիվ ուսանողների մոտ բարդություններ են առաջացնում: Առաջարկ՝ թարգմանել գրականությունը, թեկուզ և տվյալ գործընթացի մեջ ներգրավել հենց իրենց ուսանողներին: